



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 153/36 «17» 09 2020

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ CROSSREF ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ, DOI ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐԻ ԲԱՑ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (OJS) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) 2016-2020 թթ. գարգացման ռազմավարական ծրագրի «Արդիական հետազոտություն և նորարարություն» նպատակի 2.1 խնդրի 5-րդ գործողության իրականացման պահանջը և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

### հրամայում են

1. Սահմանել, որ 2021 թ. հունվարի 1-ից.

1) ԵՊՀ-ի կողմից հրատարակվող (այդ թվում՝ համատեղ հրատարակվող) ամսագրերը պետք է գրանցվեն «Crossref» համակարգում՝ համապատասխանելով նշված համակարգի բարեվարքության կանոններին,

2) ԵՊՀ-ի կողմից հրատարակվող ամսագրերի (այդ թվում՝ համատեղ հրատարակվող) խմբագրական աշխատանքները (հոդվածների ընդունում, գրախոսության գործընթացի կազմակերպում, հոդվածների խմբագրում) կատարվելու են բացառապես էլեկտրոնային եղանակով՝ OJS համակարգի (<http://journals.ysu.am>) միջոցով,

3) Անգլերեն տպագրվող ԵՊՀ ամսագրերը պետք է գրանցվեն (դիմեն գրանցման համար) Scopus և Web of Science շտեմարաններում,

4) ԲՈԿ-ի շտեմարաններում ընդգրկվելու համար երաշխավորագիր տրամադրվելու է միայն վերոնշյալ պահանջներն ապահոված ամսագրերին:

2. Սույն հրամանից ծագող աշխատանքների կատարումը հանձնարարել ԵՊՀ ամսագրերի խմբագրություններին՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանելով 2020 թ. դեկտեմբերի 31-ը:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ԵՊՀ ճշգրիտ և բնագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտորին (Ռ. Բարխուդարյան):

4. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ գիտական քաղաքականության վարչությանը, ամսագրերի խմբագրություններին:

ԵՊՀ ռեկտորի  
ժամանակավոր պաշտոնակատար

Գ. Գ. Գևորգյան